

ՎԱԽԱՆ ԵՒ ԹԱՂՈՒՄ

ԵՐԱՆԱԾՆՈՐՀ

Տ. ԹՈՐԳՈՍ Ս. ՊԱՏՐԻԱՐՔԻ

Թորգոն Պատրիարք, իր կեանքի վերջին ինը ամիսները անցուց մահարունի մէջ Ֆրանչիսկեան Միաբանութեան՝ Սուրբ Փրկչի Վանուց՝ բուժաբանի սենեալներէն միոյն մէջ, ուր ստացաւ թշկական լաւ ինամբ ու հոգատարութիւն։ Ան իր մահկանացուն կնքեց 12 Հոկտեմբեր 2013, Ուրբաթ օրը առաօտեան ժամը 10:30ին։ Հանգուցեալի վախանումէն անմիջապէս վերջ, գոյծը տեղեկացուեցաւ Ֆրանչիսկեան միաբանութեան կողմէ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան եւ անորուղ զիսատրուած Սուրբ Արոռոյ Լուսարարապէտ Գերշ. Տ. Նորիհան Արք. Մանուկեանին, պարտ ու պատշաճ թաղման կարգադրութիւնները տեսնելու։

Սրբազն Պատրիարքի մահուան գոյժը արձագանգուեցաւ Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի մէծ զանգին սպահունչ դողանջներով։ Սուրբ Յակոբայ Տեառնելքոր Գահը սեւ բողով ծածկել եւ Պատրիարքարանը կարմիր մոմով կնքել եսք, Տօրէն Ժողովը, Սուրբ Արոռոյ Լուսարարապէտ Սրբազն Հօր զիսատրութեամբ կազմեց Հոկտեմբեր 22-ին կայանալիք թաղման եւ վերջին օծման արարողակարգը։ Հանգուցեալի մարմինը հիւանդանոցին մէջ զմռաւելի վերջ, Հոկտեմբեր 21-ին, Կիրակի յետ միջօրէին ժամը 2-ին, բերուեցաւ Երուսաղէմ Հին Քաղաքի Յոպապէի դրան առաջ, ուր կը սպասէին Միաբանութիւն եւ Ժողովուրդ, Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Նույրապէտական Արոռոներու ներկայացուցիչներ, Թեմակալ Առաջնորդներ եւ տեղոյն Քիստոնեայ յարանուանութեանց Պետքրու ներկայացուցիչներ։ Թափօրը կը զիսատրէր Սուրբ Արոռոյ Տեղապահ՝ Գերշ. Տ. Արիս Արք. Շիրվանեան։

Ծանր լուրիին մը տիրած եր ամենուրէք։ Բոլորի մտքին յուշերու կարաւան մըն եր, որ կ'անցնէր։ Հանգուցեալ Պատրիարքը ծանօթ անձնաւորութիւն մըն եր մէծին ու պղտիկին, որոնք եկած եին իրենց յարգանքի վերջին տուրքը մատուցելու։ Հոն եր, Հայ Երուսաղէմը իր բոլոր խաւերով։ Հոգեւորականաց փաղանգը, Ժառանգաւրաց Վարժարանի եւ Ընծայարանի սաներն ու Սրբոց Թարգմանչաց Վարժարանի երկսեռ աշակերտութիւնը, Միութիւններու ներկայացուցիչներն ու համայն Սահմահայութիւնը։

Թափօրը առաջնորդեց հանգուցեալ Ա. Պատրիարք Հօր մարմինը դեպի Սրբոց Յակոբեանց Մայր Տաճար, ուր պիտի հանձէր մինչ յաջորդ առաօտ վերջին օծման եւ առ Աստուած յուղարկաւորութեան համար։

ՎԵՐՋԻՆ ՕԾՈՒՄ

Յաջորդ առաօտ, Երկուշաբթի, տեղի ունեցաւ վերջին օծման արարողութիւնը Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ։ Առաօտ կանուխ՝ չորս վարդապէտներ,



Երջանկայիշատակ Պատրիարք Արքազան Հօր դագաղը, Կիրակի 21 Հոկտեմբեր
2012-ին, յետ միջօրէի ժամը 2-ին, կը դիմաւորուի Դաւիթի դռնէն:



Երջանկայիշտակ Պատրիարք Սրբազն Հօր դագաղը, Կիրակի 21 Հոկտեմբեր
2012-ին, յետ միջօրէի ժամը 2-ին, համդիսաւոր բափորով կը բերուի Սրբոց
Յակոբեանց Մայր Տաճար:

դագաղին շուրջ լրելեայն քաղեցին աւետարաններ եւ սահմոսներ: Գիշերային եւ առաւտեան ժամերգութենեն ետք, Հանգստեան հանդիսաւոր Ս. Պատարազը մատոյց Արարատեան Թեմին Առաջնորդ եւ Հայրապետական Փոխանորդ՝ Գերշ. Տ. Նաւասարդ Արք. Կանյեան: Ս. Պատարազի ընթացքին, «Ողջոյն»էն առաջ, դագաղը բեմ հանուեցա, ուր Սուրբ Աթոռոյս Տեղապահ՝ Գերշ. Տ. Արիս Արք. Շիրվանեան, կատարեց վերջին օծման կարգը շրջապատուած Նուիրապետական Աթոռներու ներկայացուցիչ Եպիսկոպոսներով եւ հայրերով:

Ժողովուրդը փութացած էր Սրբոց Յակոբեանց Սայր Տաճար, իր յարգանքի վերջին տուրքը բերելու Երուսաղեմի Հանգուցեալ Պատրիարքին:

Ներկայ էին Երուսաղեմի Քաղաքապետարաններ ներկայացուցիչներ, ինչպես նաև Երուսաղեմի Սուֆթին եւ դեսպանատուններու եւ հիմապատոսարաններու ներկայացուցիչներ:

Օծման յուղից արարողութենեն վերջ եւ «Ողջոյն»էն առաջ, յանուն Սայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, Ն.Ս.Օ.Ս.Ս. Գարեգին Ամենայն Հայոց Հայրապետի եւ Ամենայն Հայոց Հայրապետութեան՝ Հանգուցեալ Պատրիարքի դամբանականը խոսեցա Արարատեան Թեմի Առաջնորդ եւ Հայրապետական Փոխանորդ՝ Տ. Նաւասարդ Արք. Կանյեան: Անոր հետեւեցան, Կիարոսի Թեմին Առաջնորդ՝ Գերշ. Տ. Վարուժան Եպս. Տերկելեանի դամբանականը՝ յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ Կոստանդնուպոլսոյ Պատրիարքութեան Ըստիանուր Փոխանորդ՝ Տ. Արամ Արք. Արշեանի դամբանականը յանուն Կոստանդնուպոլսոյ Պատրիարքութեան:

Ասկէ ետք, Սուրբ Աթոռոյս Տեղապահ՝ Տ. Արիս Արք. Շիրվանեան հայերենով եւ անզլերենով ներկայացուց Հանգուցեալ Պատրիարք Սրբազն Հօր կենսագրական սեղմ բայց կարկառուն զիծերը:

Դամբանական խօսքերէն վերջ, բովանդակ հոգեւորականաց դասը Աւագ Խորան բարձրացաւ եւ «Ողջոյն»ի հրահանգէն յետոյ, բոլորը ծնկաչոր իրենց վերջին հրաժեշտը առին Սուրբ Աթոռոյ Հանգուցեալ Պետէն:

ԹԱՂՄԱՆ ԿԱՐԳ

Ս. Պատարազի աւարտին, Միաբանութիւն եւ Ժողովուրդ թափօր կազմած, չորս հոգեւորական հայրեր թագ ի զլուխ, ուսամբարձ տարին Հանգուցեալ Պատրիարք Սրբազն Հօր դագաղը տարին Փրկչավանք, հոն հանգչեցնելու անոր մարմինը Երանաշնորհ Պատրիարքներու կողքին:

Հանգուցեալ Պատրիարք Սրբազն Հօր մարմինը հանգչեցաւ հանգրուան առ հանգրուան, Սրբոց Յակոբեանց Վանուց մուտքին, Սիոնի Ճանապարհին, Սիոնի Դրան առջեւ, ուր եւ քաղուեցան աւետարանական պատշաճ հատուածներ:



668-2017

Թաղման կարգի աւարտին, Հանգուցեալ Պատրիարք Սրբազնն Հօր մարմինը յանձնուեցաւ հողին, «Փառք ի բարձունս» երգեցողութեամբ:

Յուղարկաւորութենէն յետոյ, Միաբանութիւնն ու ժողովուրդը բարձրացան Պատրիարքարան՝ իրենց ցաւակցութիւնները մատուցանելու Սրբոց Յակոբեանց Միաբանութեան սպակիր անդամներուն և Սուրբ Աթոռոյ Տեղապահ՝ Գերշ. S. Արիս Արք. Շիրվանեանին:

Հանգուցեալ Պատրիարք Սրբազնն Հօր յիշատակը անթառամ պիտի մնայ բոլոր անոնց մեջ, որոնք ճանչցած ու վայելած են Սրբազնն Հօր հայրական խնամքն ու հոգատարութիւնը:

Երանի որ ունիցի յիշատակ ի Սիոն

Նորայր Վրդ. Գագագեան



Երկուշաբթի առաւօտ, 22 Հոկտեմբեր 2012-ին, Աւետարաններու ընթերցում:

ԾԱՅՐԱԳՈՅՑԻ ՊԱՏՐԻԱՐք
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՑ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐ ԱԹՈՒ-ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇԽՆ,



SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ECHMIADZIN

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՑ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ
ԵՐՈՒՍԱԼԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐք ԱՄԵՆԱՊԱՏԻՎ

Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՁԵՂԻՄԿՈԴՈՒՄ ՄԱԼՈՒԿՅԱՆԻ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՈՎ

"Եկր հաւատարիմ մինչև ի մահ և տաց թեզ զպսակին կենաց":
(Հայուն. 2.10)

Ազակիր հոգևոր եղբայրներ, բարեկալաշու ժողովուրդ,

Այս տխուր օրը վշտայի սրտով աղոքք ենք բարձրացնում առ Աստված Երուսաղեմի Հայոց Պատրիարք Գերաշնորհ Տ. Թորգոն Արքայիսկուսու Մանուկյանի հոգու հանգստության և խաղաղության համար:

"Եկր հաւատարիմ մինչև ի մահ և տաց թեզ զպսակին կենաց": Եկր Տիրոց այս խոսքերը հավիտենական կյանքի բերկրայի խոստումն են քերում յուրաքանչյուր հավատացյալի, ով ապրում է խորին հավատորով ու Քրիստոսաւեր ողով՝ բարի ու արդար գործերով ծառայելով մարդկանց և իր ժողովորին: Ի Տիր հանգույցալ Թորգոն Պատրիարքի ողջ կյանքի այդպիսի նվիրում ու անհնգիարեկ սպասարկությունն եղալ Բարձրայի Աստծուն և հարազան ժողովորին: Հոգելուս Պատրիարքը մինչև մահ հավատարիմ մնաց իր կոչմանն ու առարելությանը, Եկեղեցուն ու ազգին ամրողանմիք ծառայության ուխտին, որով և Տիրոց խորի համաձայն՝ պիտի ստանա կյանքի պատակ հավիտենական երանելի օրեանելուն: Միրելի հավատափոք զավակելեք Մեր, այսօր, երբ տխուր են մեր սրտերը, ու սույն մեջ ենք սիրելի Պատրիարքից բաժանումն այս ծանր պահին, հավատում ենք, որ իր հոգին ուրախությամբ պահում է դեպի Փրկիչը մեր Հիսուս Քրիստոս և հավերժական կյանքի հանգրգանում Աստծո առջև պիտի ներկայանա առաքելական խորի վկապությամբ. "Պատերազմեցի բարի պատերազմը, ավարտեցի ընթացքը, պահեցի հավատը" (Բ Տիմ. 4.7):

Մեր հոգիներում այս պահին Պատրիարք Արքայանի հետ կապված ջերմ իիշողություններն են և մեր մտահայացքի առջև՝ երա կյանքի վաստակարեն ուղին: Երևանադեմի Սրբոց Հակոբյանց Ժառանգավորաց վարժարանի հոգևոր դարբնուում է բրծվել ողին բարեկիշառական Պատրիարքի: Հոգելուս Թորգոն Պատրիարքը երխուսարդ հասակում՝ քանակայա տարիքում, Սուրբ Հակոբոս զիանդիր առաքյան մասներակիր տաճարում ծննադիր ուխտադրությամբ ստանելեց կոսակըն հոգևորականի առարելությունը ազգային-Եկեղեցական մեր անդաստանում: Ավելի քան յոթը տասնամյակներ ազգահիմության ու հայրենասիրության ողով և արդյունազարդեց իր սպասարկությունը Երևանադեմի Պատրիարքությունում, ապա որպես առաջնորդ Միացյալ Նահանգների Արևմտյան, այսուհետև Արևելյան թէմերում: Ըստրվելով Երուսաղեմի Հայոց Պատրիարք՝ ուսահոգի Թորգոն Արքազակը վերադարձակ իր հոգևոր ծննդավայրը, որտեղ տասնամյակներ շարունակ ասխանձախնդրությամբ, իր խորիս ու վեհանձն ողով շանք ու եռանդ ներքրեց՝ ի շինություն Պատրիարքության և ի պահապանը յուն Սուրբ տեղայաց մեր նվիրական սրբությունների: "Սուստեր են կեանք մեր ի վերա երկրի", - առում է Հոր երանելին (Հոր 8.9)՝ նկատի ունենալով Երկրապոր կյանքի անցողիկությունն ու կարձատելությունը հավերժության համեմատ: Թորգոն Պատրիարքի առաջելությունը, սակայն, լուս եղալ մեր ժողովրդի հոգևոր Եկեղեցական կյանքում և իր պայծառ հետազիծը բողեց մեր Եկեղեցու

պատմության և հավասավոր հայորյաց բարի հիշողությունների մեջ։ Երուսաղեմ՝ Տերութակոն վայրերին երկրպագության այցելող բազմաթիվ հայ ուխտավորներ Մայր Հայրենիքից և աշխարհի տարբեր երկրերից այստեղ միահարփում էին Պատրիարքի քաղցր ու օրինարքեր խոսրով, գորանում հավատրով՝ բարի ընթացքով ու երկնահաճ գործերով զարդարելու իրենց աստվածաշնորհ կյանքի ուղին։

Այսօր փակվում է երկրավոր կյանքի մասնակը հանգուցյալ Թորգոն Պատրիարքի, սակայն նա շարութակում է խոսել մեզ հետ իր զրբերի, բանաստեղծական ժողովածուների, մենագրությունների ու թարգմանությունների միջից, որոնցում ծրաբել է իր հոգու խորին հավատքը, մոտածումներն ու զգացումները՝ իր ընթերցողներին բացալերելով բարու, արդարության ու ազնվության և ազգային սրբազնա արժեքների հանդեպ աննվազ նվիրումի։


Սիրելիներ, Սուրբ Հոգու միահարպության շնորհները հայցելով մեզ ամենքին։ Մեր բազալերանքի խոսքն ենք ուղղում Սրբոց Հակոբյանց գինվորյալ միաբանության անդամներին, ովքեր նվիրյալ պահապաններն են այս Սուրբ Աթոռի և պաշտպանները Սուրբ տեղյաց մեր սրբությունների։ Թող Բարձրյալն Աստված միշտ գորակից լինի ձեզ, որպեսզի վախճանակայ Պատրիարք Սրբազնի երկարամիս և ախանձամինդիր ծառայության օրինակով հավելեր փառքն ու պարծանքը Երուսաղեմի Հայոց Պատրիարքության և երկնառար օգևականությամբ պայծառ պահեք Սրբոց Հակոբյանց միաբանությունը՝ աղոթական ջանքեր բերելով համայն հայության հոգևոր շինության ու առաջընթաց կյանքի համար։

Ի խորց սրտի աղոքը ենք վերառարում առ Ամենողորմն Աստված, որ երկնից լուսեղն օքեաններում բաղցրությամբ ընդունի և աջակողման դասում՝ երանյալ սրբերի շարքում, հանգչեցնի հոգին վաստակաշատ ու հավատարիմ նր ծառայի։ Երուսաղեմի Հայոց Պատրիարք Գերաշնորհ Տ. Թորգոն Արքայիսկուպոս Մանուկյանի, և Սուրբ Հոգու շնորհներով միահարպություն պարզենի հավատավոր համայն մեր ժողովողին։

Լոյս, աղոքը և օրինություն մեր սիրելի Թորգոն Պատրիարքի անմոռաց հիշատակին։

“Յիշեսցէ Տէր զինզի ծառային իրոյ և յանցուցէ զնա ի լոյս երեսաց Ասոուածութեան Իրոյ ամէն”։

Վշտակից սիրով և օրինությամբ՝



ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Երկուշարքի առաւօտ, 22 Հոկտեմբեր 2012-ին, Սուրբ եւ անմահ Պատարագի ընթացքին, Պատրիարքական Տեղապահ՝ Գերշ. Տ. Արիս Արք. Շիրվանեան
կը կատարէ Վերջին Օծումը:



Տեղապահ Արքական Հայրը կուտայ հոգեւոր պատգամն ու դամբանականը
Հանգուցեալ Պատրիարք Արքական Հօր:



ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՄԵԾԻ ՏՄՆՆ ԿՐԼԻԿՐՈՅ

ԱՆԺԵՐԱՍ - ԷՐԱԽԱՆ

Ամբիլիար,

թիւ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Ա.ՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՑԱՒԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ

ԵՐՈՒՍԱԼԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ

Ն.Ա. ԹՈՐԳՈՄ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ՎԱԼԵՃԱՆՄԱՆ ԱՌԹԻՒ

“Զքարտիք պատերազմ պատերազմեցայ, զընթացսն կատարեցի, զհաւատսն պահեցի: Այսուհետեւ կայ մնայ ինձ արդարութեան պատկե, զոր հատուցէ ինձ Տեր յաւուր յայնմիկ...” (Բ. Տմ. 7-8):

Պօղոս Առաքեալ իր երկրաւոր կեանքի վերջալոյսին այս բառերով կը բնորոշէ իր ստպած կեանքը ու մանաւանդ քրիստոնէական հաւատիքի տարածման բերած իր մասնակցութիւնը: Արդարեւ, որու՞ն կը պատշաճին Առաքեալին այս պարզ բայց խորիմաստ բառերը Հոգելոյս Պատրիարքին, որու՞ն աւելի բան կէս դարու հոգեւոր կեանքը լցուեցաւ ու արժենորուեցաւ հաւատիքի առաքելութեամբ: Ամենապատի Տ. Թորգոմ Պատրիարք իր երկրաւոր կեանքի օրերը ապրեցաւ ու հարստացուց հոգեմտաւոր արժեքներով ու սկզբունքներով այլ խօսքով, հաւատիքի առաքելութեան կենսագործումով մեր եկեղեցւոյ ու ազգի կեանքէն ներս՝ Երուսաղէմի արեղայական տարիներէն սկսեալ մինչև Միացեալ Նահանգներու իր առաջնորդական շրջանը ու ապա իր գահակալութեան տարիները, որպէս Պատրիարք Երուսաղէմի Հայոց:

Մենք մօտէն նաև ցածրած ենք հոգելոյս Պատրիարքի անցնող շուրջ ժառանուն տարիներու ընթացքին և իր մօտ տեսած ու վկայած ենք հետեւեալ արժեներն ու արժանիքները:-

ա) Հայ եկեղեցւոյ ծառայութիւնը Թորգոմ Պատրիարքին համար եղաւ ամենօրեայ ապրում ու կեանքի միայուն ուղեցոյց: Նուիրապետական կարգի խոնարհագոյն աստիճաններէն մինչեւ Պատրիարքութիւն, իր ստանձնած հոգեւոր թէ վարչական բոլոր պատասխանատուութիւններուն մէջ Հոգելոյս Պատրիարքը ինքնինք ըմբռնեց ու իր կեանքը իրագործած որպէս ծառայ Սատուծոյ ու ծառայ հայ եկեղեցւոյ իր “այրիի լուման” դնելով մեր եկեղեցւոյ ու ժողովուրդի ծառայութեան գանձանակին մէջ:

բ) Հոգելոյս Թորգոմ Պատրիարք եղաւ մտաւորական հոգեւորական: Սաղիմական միարանութեան անցեալի տիտան դէմքերը, Դուրեան ու Գուշակեան պատրիարքները, իբենց բանաստեղծական բոիչներով ու գրական հարուստ ստեղծագործութիւններով դարձան իր մնայուն ուսուցիչները ու ներշնչման աղբիւրները եղան: Անոնց բայլերուն հետեւելով Թորգոմ Պատրիարք ինք եւս իր ներդրումը կա-



ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿՐԼԻԿՐՈՅ

ԱՆԺԻՇԽԱՍ - ՀԻՋԱՎԱՆ

Ամբիլիաս,

Քիւ

տարեց հայ մշակութային արժեքներու առաւել հարստացման, յատկապէս գրական, գեղարվեստական ու բանաստեղծական բնագաւառուն ներս:

գ) Թորգոնմ Պատրիարք եղաւ ընդիանարապէս հայ երաժշտութեան ու յատկապէս Կոմիտասեան երաժշտութեան ֆաջածանօր անձերէն մէկը: Կոմիտասեան երաժշտութեան իր մօտեցումը, սիրողական սահմաններէն անդին եղաւ մասնագիտական: Իրեն համար Կոմիտասի մասին խօսիլը զերազանցօրէն խրայատուկ ապրում ու վայելի էր:

դ) Հոգելոյս Պատրիարքը իր գահակալութեան շրջանին նոր փայլիք տուաւ նրուսաղէմի Հայոց Պատրիարքութեան՝ շինարարական, վարչակազմակերպչական, կրթական ու մշակութային մարզերէն ներս: Հակառակ Նրուսաղէմի Պատրիարքանը շրջապատող ոչ-նպաստաւոր պայմաններուն, Թորգոնմ Պատրիարք անվեհեր պաշտպանը եղաւ, ընականարար իր շուրջ ունենալով նրուսաղէմի զինուորեալ միարանութիւնը, հայ եկեղեցւոյ դարաւոր իրաւունքներուն:

Սրբազն Առաքեալին բառերով Հոգելոյս Պատրիարքը իր կիանիի "բարւոյ պատերազմը" հաւատենվ պատերազմեցաւ բարձրագոյն աստիճանի նուիրումով Աստուծոյ, եկեղեցւոյ ու ազգին ծառայելով:

Կ'աղօրենք առ Ամենազուրն Աստուած, որ երկնային երանական խաղաղութեան մէջ ընդունի Թորգոնմ Պատրիարքի հոգին եւ զինք յաւիտենական կեանքի արժանացնէ: Թող Աստուած Սուրբ Հոգելոյն ներգործող զօրութեամբ առաւել եւս պայծառացնէ մեր սուրբ եկեղեցին իր առաքելութեամբ ու ծառայութեամբ:

Այս տիսուր առիրով անձնապէս եւ յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միարանութեան, Ազգ. Եկեղեցունական Վարչութեան, մեր Սուրբ Արքոի Թեմակալ Առաջնորդներուն ու Ազգ. Եշխանութեանց եւ մեր ժողովուրդին, Մեր խորազգած ցաւակցութիւնները կը ներկայացնենք՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կարողիկոսին, Երուսաղէմի Պատրիարքութեան Տեղապահ Սրբազնին ու միարանութեան. ինչպէս նաև Կոստանդնուպոլիսյ Պատրիարք Նորին Ամենապատութիւն Տ. Մեսրոպ Արք. Մուրաֆեանին, հայցելով Ամենարարին Աստուծմէ որ անսասան պահէ մեր Սուրբ եկեղեցին իր Նուիրապետական Արոռներով:

Աղօրարար՝

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ



Երեւանի Թեմին Առաջնորդական Փոխանորդ՝ Գերշ. Տ. Նաւասարդ Արք.
Կնոյեան կը կարդայ Ամենայն Հայոց Հայրապետ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.
Կաթողիկոսի ցաւակցական գիրը:



«Վերջին Ողջոյն: Վերջին Հրաժեշտ:»



ՊԱՏՐԻԱՐքՈՒԹԻՒՆ
ՀԱՅՈՑ
ԱՏՎԱԿՐՈՒ

ERMENİ
PATRİKLİĞİ
İSTANBUL

ARMENIAN
Patriarchate
Istanbul

הספרייה הערבית הארכימומית באיסתנוביל מילקי אסנתאול וסאלח קי לאדרון

Այսօր բոլորս ի մի համախմբուած ենց աղօթքներով յուղարկաւորելու մեջի շատ սիրելի ու յագելի Թորգոմ Սրբազն Պատրիհարը Յայրը, դեպի յախտեականութիւն: Այս պահուն կը յիշենց Պողոս Առաքեալի խօսքը, ուղղուած Եփեսոսի երեցներուն. Զգոյ եղեք դուք ծեր անձին եւ ամբողջ հօտին՝ որուն Վրայ Սուրբ Յոդին տեսուչ կարգեց ծեզ հովուելու համար Տիրոջ ժողովուրդը, զոր Աս Վրորկեց իր արիմսով (Գործ 20.28): Առաքեալը այս խօսքերը արտասանած էր հրաժեշտի իր պատգամին մէջ: Այդ խօսքերը ողջոյնի խօսքեր էին. Սուրբ Յոդիին Նկատմամբ Վստահութիւն կը բուրեին. հաշուետուութեան ընոյթ ունեին. Եւ մանաւանդ զգուշացում մը՝ իր մեկնումն յետոյ պատահելից հաւասական Ժխտական Երեւոյներու մասին:

Երանաշնորհ Պատրիարք Սրբազն Հայոց իր եօթանասուն եւ երեցամեայ քահանայական ծառայութեան ընթացքին ցոյ տուալ, թէ լաւագոյնս զմբռնած եր առաջելական պատգամը եւ կատարեալ հաւատքով թափանցած՝ անոր իմաստին:

Ան, մեր ժողովուրդի այս զաւակներէն էր, որոնք պատերազմի թոհուբրոիին հետեւածքով յառաջ Եկած կեանքի պայմաններու թերմամբ չէին կոցած Վայելել իրենց մանկութիւնը: Իրեն համար Երշանկութիւն էր զլալ Սրբոց Յակոբեանց սուրբ յարկին տակ, ինև դաստիարակուիլի եւ մանաւանդ Վայելել Կրմաշական մեծանուն Եկեղեցական երանաշնորհ Թորգոմ Ա. Սրբազն Պատրիարք Հօր հայրական հոգածութիւնը եւ թրծուի՝ ծառայութեան ոգիով ապագային դառնայու համար հովի՝ իրեն յանձնելի ժողովուրդին:


Իւրաքանչիւր անշնչացած մարմին կը լեցնէ իրեն համար բացուած գերեզմանի փոսը: Երբ Երանաշնորհ Սրբազնն Պատրիարք Յօր մարմինը հողին պիտի յանձնուի, մենք պիտի դժուարանակը մեր սրտերն մէջ իր թռյած փոսը լեցնել: Ֆիրաւի Թորգում Ս. Պատրիարք Յօր վախճանմամբ Հայաստանեաց Առաքելական Եկեղեցւոյ մէջ գոյացած է փոսեր, քանի որ մենք կորսնցուցած ենք իր կոչումին գիտակից քահանայ Մը, Բանին Կենաց հաւատաւոր քարոզիչ Մը, առաքելական պատգամին հաւատարիմ տեսուչ մը Եւ հուսկ՝ Սրբոց Յակոբեանց Գահուն արժանաւոր գահակալ մը:

Իր հոգեւոր ծառայութեան բոլոր հանգրուաններուն իր Ետին թողուց անցնչելի հետքեր. Յայ գիրին Եւ գրականութեան Նկատմամբ տածած սիրով, Յայ Եկեղեցոյ սրբութեանց պահպանման ուղիով ցուցաբերած նախանձախնոյի կեցուածքով Եղաւ լուսաւոր փարոս մը, որ անշշանելի լոյսով լուսաւորեց Եւ ապագային ալ ատակ է լուսաւորելու հոգեւոր ծառայութեան նուիրեալներու ուղիներո:

Այսօր հրաժեշտ կ'առնե մեզմէ, ու կ'երթայ միանալ Սրբոց Յակոբեանց Առաքելական Աթոռի Երանաշնորհ եւ անմոռանալի գահակալսերուն՝ Գրիգոր Շղթայակորի եւ Գրիգոր Պարուստերի եւ Զրիստոսակոխ Վայրերու իրաւապահ գինուրեալ ծառայողներու փաղանցին:

Այսօր իր պատգամը ունի մեզի եւ կը հրաիրէ նոյն նախանձախնդրութեամբ տեր կանգնիլ շարունակել մեր սրբատեղեաց իրաւունքներուն: Կը հրաիրէ հաւատարիմ մմալ մեր սրբազան կոչումին: Երանաշնորհ Թորգոմ Սրբազան Պատրիարք Յայրը, բարի պատերազմը պատերազմեցաւ, ընթացքը աւարտեց, հաւատըց պահեց, ու կը սպասէ արդարութեան պսակը: Յրաժեշտի այս պահուն կ'աղօթենք ըսելով. Զրիստոս Աստուած Փրկիչ մեր, շնորհեա սմա յարդար դատաւորութեան քում ընդ Պետրոսեան աթոռակցութեանց վերապատուիլ:

Այս առթիւ յանուն Կոստանդնուպոլսոյ Պատրիարքական Աթոռին, Պատկառելի Կրօնական ժողովին, Յոգեւորականաց Դասուն, համայնքային եւ թաղային մարմիններու վարիչներուն ու մեր հաւատացեալ ժողովուրդին կը ցաւակցինք Սրբոց Յակոբեանց Միաբանութեան ուխտապահ անդամներուն եւ կ'աղօթենք Յայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ անսասանութեան համար: Տեր Աստուած նոր մշակներ հանե իր հովնձին համար ի փառս Աստուծոյ, ի շինութիւն Առաքելական Ս. Աթոռոյն Երուսաղիմայ եւ ի միհիթարութիւն ու հիգեւոր շինութիւն մերազն հաւատացելոց:



Արամ Արքեականակոս Աթեշեան
Պատրիարքական Ընդհանուր Փոխանորդ



Վերջին Օժման արարողութեանէն ետք, վերջին համգիստ: